

**«Ը.00.03 - Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտության
2018-2019 ուս. տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելության
համալիր մասնագիտական քննության հարցաշար**

1. Ֆինանսական պլանի էությունը և արդյունավետության վերլուծությունը:
2. Հարկ հասկացությունը, տնտեսական ու իրավական հատկանիշները, դասակարգումը և դրա նշանակությունը, գործառույթներն ու դրանց նշանակությունը:
3. Հարկի դրույքաչափեր հասկացությունը, նշանակությունը և տեսակները, հարկային “բեռի” հաշվարկման մեթոդաբանությունը և տնտեսական նշանակությունը, տարբեր հարկատեսակների հարկման օբյեկտներն ու արտոնությունները:
4. ՀՀ հարկային համակարգ հասկացությունը, բնութագիրը և կառուցվածքի տարրերը, պետության հարկային քաղաքականության սկզբունքները, նպատակները և խնդիրները:
5. Հարկային ստուգման հասկացությունը և իրականացման ձևերն ու մեթոդները, հարկ վճարողի իրավունքներն ու պարտականությունները:
6. Հարկային հսկողություն հասկացությունը, բովանդակությունը, սկզբունքները և գործառույթները, հարկային ծառայության խնդիրները, գործառույթներն ու լիազորությունները:
7. Շահութահարկի հարկման օբյեկտը որոշելիս հաշվի առնվող եկամուտները և դրանց հարկային հաշվառումը:
8. ԱԱՀ վճարողները և վճարման պարտավորություն կրողները, հաշվարկման և վճարման կարգը, հաշվառումը:
9. Եկամտային հարկ վճարողները, հարկվող օբյեկտը, հաշվարկման և վճարման կարգը:
10. Ակցիզային հարկի հարկման բազան, հարկման օբյեկտը, դրույքաչափերը, վճարման ժամկետը:
11. Հողի հարկով հարկման օբյեկտը, պարտավորությունների հաշվարկման, վճարման կարգը, հաշվառումը:
12. Գույքահարկով հարկման բազան, պարտավորությունների հաշվարկման, վճարման կարգը, հաշվառումը:
13. Շրջանառության հարկը և դրա առանձնահատկությունները:
14. Արտոնագրային վճարով հարկվողները, հաշվարկման կարգը:
15. Հաստատագրված վճարով հարկվողները, հաշվարկման կարգը:
16. Բանկային գործունեության էությունը, առևտրային բանկերի գործառնությունները:
17. Կենտրոնական բանկի գործառույթներն ու կառավարման գործընթացը:
18. Անկանխիկ հաշվարկների կազմակերպման սկզբունքները:
19. Պրորբլեմային վարկեր, վարկերի պահուստավորման կարգը:

20. Արտարժութային գործառնություններ:
21. Բանկային գործունեությունը կանոնակարգող հիմնական օրենսդրությունն ու նորմատիվային դաշտը:
22. Բանկի իրացվելություն և վճարունակություն:
23. Բանկի դրամական ակտիվների ստուգումը, դասակարգումը և գնահատումը:
24. Բանկի ընդհանուր կապիտալի ֆունկցիաները, կառուցվածքը և տարրեր:
25. Միջազգային վճարահաշվարկային փոխհարաբերությունների ձևերը և մեթոդները:
26. Առևտրային վարկը, ուղղվածությունը և գործիքները:
27. Պետական վարկ, դրա սպասարկում:
28. Տարբեր մակարդակների բյուջեների փոխհարաբերությունները ՀՀ-ում:
29. Բյուջետային եկամուտների և ծախսերի պլանավորման մեթոդները:
30. Բյուջետային դասակարգման էությունը և նշանակությունը:
31. Բյուջետային վարկեր, փոխատվություններ և երաշխիքներ հասկացությունները:
32. ՀՀ բյուջետային համակարգի կառուցվածքը և նրա ընդհանուր սկզբունքները:
33. Բյուջեների “ելքեր” ու “մուտքեր”, “եկամուտներ” ու “ծախսեր” և բյուջեների “դեֆիցիտ” և “հավելուրդ” հասկացությունները ՀՀ-ում:
34. Բյուջեների (պետական և համայնքների) հրապարակայնությունը և այն ապահովելու համար նախատեսված միջոցառումները ՀՀ-ում:
35. ՀՀ պետական բյուջեի ծախսերի գործառական դասակարգման հոդվածները:
36. ՀՀ պետական բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածները:
37. ՀՀ պետական բյուջեի ծախսերի գերատեսչական և տարածքային դասակարգման հոդվածները:
38. Տեղական տուրքերի և վճարների տեսակները եւ դրանց սահմանման կարգը ՀՀ-ում:
39. Արժեթղթերի շուկան ֆինանսական շուկայի համակարգում:
40. Արժեթղթերի շուկայի մասնակիցները (թողարկողներ և ներդրողներ):
41. Արժեթղթերի շուկայի ֆինանսական գործիքները:
42. Արժեթղթերի դասակարգումը:
43. Բաժնետոմսերի և պարտատոմսերի ընդհանուր բնութագրերը, տեսակները:
44. Ֆյուչերսային, ֆորվարդային և օպցիոն պայմանագրեր:
45. Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարումը:
46. Բորսայական առևտրի կազմակերպման եղանակները:
47. ՀՀ պետական արժեթղթերի շուկայի ընդհանուր բնութագիրը:
48. Արժեթղթերի շուկայի պետական կարգավորումը:
49. Դրամական հոսքերի օպտիմալ մակարդակի որոշման մոդելները:

50. Կազմակերպության ֆինանսական դրությունը բնութագրող համակարգը:
51. Ֆրանչայզինգը և դրամական հոսքերը:
52. Լիզինգ, հայրինգ, ռենթինգ գործառնությունները:
53. Ֆինանսական ռիսկերի կառավարումը:
54. Ձեռնարկության ծախսերի դասակարգումը:
55. Ձեռնարկության ֆինանսական դրության գնահատումը:
56. Ձեռնարկության հիմնական ֆինանսական փաստաթղթերը:

57. Հաշվապահական հաշվառման էությունը, առարկան, կազմակերպումը և կարգավորումը:
58. Ֆինանսական հաշվետվությունները, դրանց կազմն ու բովանդակությունը. հաշվապահական հաշվեկշիռը, դրա կառուցվածքը և բովանդակությունը:
59. Հաշվապահական հաշիվների կառուցվածքը, բովանդակությունը. կրկնակի գրանցման էությունն ու նշանակությունը. սինթետիկ և անալիտիկ հաշվառման բնութագիրը, դրանց փոխադարձ կապը:
60. Հաշվապահական փաստաթղթերի բովանդակությունը, նշանակությունը և կարևոր վավերապայմանները. գույքագրումը, դրա անցկացումը և հաշվառման մեջ արդյունքների արտացոլման կարգը:
61. Ակտիվների և պարտավորությունների գնահատումը, կալկուլյացիան որպես արտադրության ծախսերի խմբավորման, նրանց չափման և ինքնարժեքի որոշման միջոց:
62. Հիմնական միջոցներ, դրանց սահմանումը, ճանաչումը, դասակարգումը և գնահատումը ըստ ՀՀՄՍ 16-ի / հիմնական միջոցների ձեռքբերման և մուտքագրման հաշվառումը:
63. Ոչ նյութական ակտիվների սահմանումը, դասակարգումը, գնահատումը և ճանաչումը:
64. Պաշարների սահմանումը, դասակարգումը և գնահատումը ըստ ՀՀՄՍ 2-ի:
65. Ֆինանսական արդյունքների հաշվառումը. իրացումից հասույթի սահմանումը, չափումը և հաշվառումը:
66. Սեփական կապիտալի հաշվառումը, պահուստային կապիտալի հաշվառումը. ֆինանսական արդյունքների և շահաբաժինների գծով պարտավորությունների հաշվառումը:
67. Գնումների գծով կրեդիտորական պարտքերի հաշվառումը:
68. Բյուջեի գծով պարտավորությունների հաշվառումը. շահութահարկի հաշվարկման կարգը և հաշվառումը:
69. Աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով պարտավորությունների հաշվառումը:
70. Իրացման ծախսերի, վարչական ծախսերի և վաճառքի գծով դեբիտորական պարտքերի հաշվառումները:

71. Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության բովանդակությունը և նպատակը ըստ ՀՀՄՍ 7-ի:
72. Հասույթ ստանդարտի նպատակը և գործողության ոլորտը:
73. Աուդիտի ձևերի և տեսակների դասակարգումը, նպատակները, խնդիրները, իրականացման մոտեցումները, նմանություններն ու տարբերությունները :
74. Ներքին և արտաքին աուդիտի հիմնական գործառույթները և խնդիրները:
75. Աուդիտի ստանդարտները, կարգավորման դաշտը, կիրառումը, սահմանումները:
76. Աուդիտի կազմակերպումը և իրականացումը՝ աուդիտորի ընտրությունը, պայմանագիր, աուդիտորական գործընթացի պլանավորումը և փուլերը:
77. Գործիմացության գնահատումը աուդիտում, աուդիտորի անկախությունը և աուդիտորական էթիկա :
78. Աուդիտորական ընտրանքի, էականության գնահատումը և աուդիտորական ռիսկերը, դրանց էությունը, գնահատումը և փոխկապակցվածությունը:
79. Աուդիտորական հաշվետվության կազմումը և դրա բովանդակությունը, աուդիտորական եզրակացության ձևավորման հանգամանքները և տեսակները :
80. Հիմնական միջոցների աուդիտը տեղեկատվական ապահովումը, իրականացումը և արդյունքները:
81. Դեբիտորական պարտքերի աուդիտի տեղեկատվական ապահովումը, իրականացումը և արդյունքները:
82. Տնտեսական գործունեության վերլուծության էությունը, առարկան և խնդիրները, հիմնական ուղղությունները և արդյունքների օգտագործումը:
83. Տնտեսական գործունեության վերլուծության մեթոդները, ավանդական և տնտեսամաթեմատիկական եղանակների առանձնահատկությունները:
84. Կազմակերպությունների աշխատանքային ռեսուրսների ապահովվածության և օգտագործման տնտեսական արդյունավետության վերլուծությունը և գնահատումը:
85. Կազմակերպությունների ոչ ընթացիկ ակտիվներով ապահովվածության և օգտագործման տնտեսական արդյունավետության վերլուծությունը և գնահատումը:
86. Կազմակերպությունների ընթացիկ ակտիվներով ապահովվածության և օգտագործման տնտեսական արդյունավետության վերլուծությունը և գնահատումը:
87. Արտադրանքի թողարկման և իրացման գործընթացների, արտադրանքի թողարկման և իրացման նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը և գնահատումը:
88. Կազմակերպությունների ֆինանսական արդյունքների վերլուծությունը և գնահատումը, հիմնական գործակիցներն ու ցուցանիշները:

89. Կազմակերպությունների ֆինանսական վիճակի վերլուծությունը, դրա ուղղությունները, ցուցանիշների համակարգը և ֆինանսական կայունության գնահատումը:
90. Վիճակարությունը որպես գիտություն, դրա մեթոդները, եղանակները, հիմնական ցուցանիշների տեսակները. վիճակագրական դիտարկում, ամփոփում և խմբավորում:
91. Բացարձակ, հարաբերական և միջին մեծություններ, դրանց տեսակները և հաշվարկման կարգը. բաշխման կենտրոնի ցուցանիշներ:
92. Վարիացիայի ցուցանիշներ, դրանց հաշվարկման մեթոդները: Համաձայնության հայտանիշներ:
93. Շարքեր հասկացությունը և դասակարգումը վիճակագրության մեջ: Դինամիկայի շարքերի վերլուծության հիմնական ցուցանիշները:
94. Սոցիալ-տնտեսական երևույթների փոխկապակցությունների վիճակագրություն և դրա հիմնական վիճակագրական ցուցանիշները:
95. Տնտեսության գործունեության արդյունավետության վիճակագրություն, հիմնական ուղղությունները և ցուցանիշները:
96. Բնակչության, աշխատուժի և զբաղվածության վիճակագրություն, հիմնական ցուցանիշները, դրանց հաշվարկման մեթոդիկան և տեղեկատվական ապահովումը:
97. Ազգային հարստության վիճակագրություն, հիմնական ցուցանիշները:
98. Աշխատանքային շուկայի վիճակագրություն, հիմնական ցուցանիշները:
99. Տնտեսության զարգացման մակրոտնտեսական վիճակագրական ցուցանիշների համակարգը և հաշվարկման մեթոդիկան:
100. Ազգային հաշիվների համակարգը:

Հաստատում եմ՝

Կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ՝

Հ. Ս. Զարոյան